

ՄԱՐՏ 2020

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում .....	9
1.3. Ջրահեռացման համակարգ .....	10
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	11
1.5. Էներգահամակարգ .....	11
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	12
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>13</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	14
2.2. Հասույթ .....	14
2.3. Գանձում .....	16
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ .....	16
2.5. Ջրաչափեր .....	18
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	19
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>20</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	21
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	22
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	24
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	25
3.5. Գոտիավորման աշխատանքներ .....	27
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>30</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>32</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	33
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ .....	33
5.3. ԱՊՆ-ների տեխնիկական գնահատման աշխատանքների մասնակցություն .....	33
5.4. Անվտանգության պատվիրակության այց .....	33
5.5. Անվտանգության ստուգայցեր, ռիսկերի հայտնաբերում/ մեղմացնող միջոցառումների կիրառում .....	34
<b>6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>36</b>
6.1. Համակարգչային ցանց .....	37
6.2. Ինտերակտիվ համակարգ .....	38

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

### Քաղաք Վանաձոր



Չուխաջյան թաղամասի ջրամատակարարման սխեմա

● Վանաձոր քաղաքի Երևանյան 121 շենքի բակի ջրամատակարարման խողովակի պարբերաբար կրկնվող վթարից խուսափելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել այն  $D=133$ մ,  $L=3$ գմ խողովակով: Դա թույլ տվեց խուսափել հետագա շահագործման բարդություններից, որի արդյունքում նաև տնտեսվել է 1/վ ջրաքանակ:



Երևանյան 121 շենքի ջրամատակարարման սխեմա



Նարեկացի 2 շենքի ջրամատակարարման սխեմա

### Քաղաք Գյումրի

● Գոտիավորման բաժնի և Շիրակ տեղամասի կողմից ուսումնասիրվել է Բուլվարային (Արագած և Վարդ-Բաղ) թաղամասերի ողջ ջրամատակարարման ցանցը՝ փականներով, խողովակների տրամագծերով, առկա ջրաքանակի չափման թվերով, հայտնաբերված վթարների վայրով և քանակով:

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 4 փականային դիտահոր՝ ամբողջովին լցված աղբով, քարերով և հողով, որոնց մաքրումն ու շահագործումը հնարավորություն է տվել ավելի հեշտ և արագ հայտնաբերել թաքնված մի շարք խոշոր վթարներ: Կատարվել են նաև փորման աշխատանքներ՝ ցանցը ուսումնասիրելու նպատակով:

Ամբողջ ջրամատակարարման ցանցն ուսումնասիրելիս պարզ է դարձել, որ կան խողովակաշարեր, որոնց շահագործումը նպատակահարմար չէ, և որոնց վրա ևս առկա են բազմաթիվ վթարներ և ապօրինի միացումներ: Ուստի նշված խողովակների շահագործումից հանելուց հետո որոշակի շին. աշխատանքների (ՊԷ խողովակների ներսրսկում, փոքր հատվածով ջրագծերի կառուցում) հնարավոր եղավ ավելի պարզեցնել Բուլվարային (Արագած և Վարդ-Բաղ) թաղամասերի ջրամատակարարման ցանցը:

Վերը նշված աշխատանքների շնորհիվ (պողպատե խողովակների շահագործումից հանում, ՊԷ և մետաղական խողովակների կառուցում և ներսրսկում) հնարավոր դարձավ շահագործումից հանել մոտ 2 տասնյակ ապօրինի միացումներ (հիմնականում այգիների ոռոգում):

Ամբողջ թաղամասը սպասարկում է 1 պոմպ, որի աշխատանքը խաթարվել էր բազմաթիվ վթարների պատճառով, ջրի պահանջարկն ավելացել էր մոտ 16.5 լ/վ, իսկ ցանցում առկա ճնշումը իջել էր մինչև 2.6 բար-ի, որը բավարար չէ թաղամասի 9 հարկանի շենքերի վերին հարկերը ջուր մատակարարելու համար:

Կատարված աշխատանքների շնորհիվ հնարավոր դարձավ թաղամաս մատակարարվող ջրաքանակը 16.5 լ/վ-ից իջեցնել՝ դարձնելով 9.5 լ/վ, իսկ ճնշումը 2.6 բար-ից դարձնել 4,5 բար: Հետագայում պոմպի ավտոմատ համակարգի վրա այն դարձրել ենք 3,7 բար, որը բավարար է թաղամասի ջրամատակարարումն ապահովելու համար: Պոմպի ծախսը 11,5 կՎտ/ժ-ից դարձել է 5,5 կՎտ/ժ:

Իրականացված աշխատանքների արդյունքում կառուցվել է D=100մմ, L=12գծմ պողպատե, D=50մմ ՊԷ L=68գծմ, D=40մմ ՊԷ L=35գծմ, D=32մմ ՊԷ L=100գծմ ջրագիծ, իսկ շահագործումից հանվել է D=100մմ և L=410գծմ պողպատե ջրագիծ:



Բուլվարային (Արագած և Վարդ-Բաղ) թաղամասի ընդհանուր ջրամատակարարման սխեմա



Բուլվարային (Արագած) թաղամասի ընդհանուր ջրամատակարարման սխեմա



Բուլվարային (Վարդ-Բաղ) թաղամասի ընդհանուր ջրամատակարարման սխեմա

**Քեղարքունիքի մարզ**


«Արևելք» ՏՏ «Միսիան» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Շիրակի թաղամասի մի հատվածը սնուցող D=50մմ քայքայված և կոռոզիայի ենթարկված ջրագծի L=90գծմ երկարությամբ հատվածը «Միսիան» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է D=63մմ պոլիէթիլենային խաղովակներով:



Իրականացված աշխատանքների արդյունքում կարգավորվել է թաղամասի բնակիչ-բաժանորդների կանոնավոր ջրամատակարարումը և խնայվել է մոտ  $Q=2,0$  ւ/վ ջրաքանակ:



## Քաղաք Սևան



● Սևան քաղաքի Շինարարներ փողոցում՝  $D=200$ մմ թուջե խողովակի վրա, հայտնաբերվել է  $Q=5$ ւ/վ վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է  $3$ ւ/վ քանակությամբ ջուր:

## Քաղաք Վարդենիս

● Վարդենիս քաղաքում Ե.Չարենց 7-րդ նրբանցքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վերացվել է  $D=150$ մմ,  $Q=7$ ւ/վ վթար:



● «Մարտունի» տեղամասի հետ կատարած ուսումնասիրությունների շնորհիվ Ծակքար-Մարտունի ջրատարի վրա  $D=600$ մմ՝ Լիճք գյուղի մոտ, հայտնաբերվել է վերացվել է  $8$ ւ/վ քանակությամբ վթար:



## Քաղաք Արտաշատ

● Գառնի ջրատարի Արտաշատ տեղամասի սպասարկման հատվածներում իրականացված գոտիավորման աշխատանքների արդյունքում Գետազատ, հայտնաբերվել է տեղամասի կողմից խցափակվել են բազմաթիվ,  $D=25-65$ մմ տրամագծի  $L=730$ մ ապօրին, վթարային վիճակում գտնվող ջրագծեր, տնտեսվել է  $Q=6$ ւ/վ ջրաքանակ:


## Քաղաք Արարատ

● Արարատ քաղաքում իրականացրած գոտիավորման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է տեղամասի կողմից վերացվել է 7 հատ գաղտնի վթարներ, որի արդյունքում տնտեսվել է  $10-12$ ւ/վ ջրաքանակ: Այդ աշխատանքներից հետո հնարավոր է դարձել Արարատ քաղաքի ջրամատակարարման տևողությունը հասցնել 24 ժամի:

● Արարատ քաղաքի Գյորգիսյան փողոցի հին  $D=85$ մմ,  $L=120$ մ ջրագծի շահագործումից հանելու արդյունքում հնարավոր է դարձել տնտեսել  $Q=2$ ւ/վ ջրաքանակ:


## Գյուղ Հոբարձի

● Հոբարձի գյուղն սնուցող ջրագիծը, լինելով կառուցված ԽՍՀՄ տարիներին, քայքայված էր և անհրաժեշտ եղավ այն փոխարինել  $D=150$ մ,  $L=7$ գծմ խողովակով: Դա թույլ տվեց խուսափել հետագա շահագործման բարդություններից, որի արդյունքում նաև տնտեսվել է 1լ/վ ջրաքանակ:



Հոբարձի գյուղը սնուցող ջրագծի սխեմա

## Գյուղ Ծովագարդ



● Ծովագարդ գյուղում հայտնաբերվել է Հացառատ-Լճաշեն ջրատարից ( $D=500$ մ) սնուցվող  $D=100$ մ խողովակ, որը հետագայում ինչպես պարզվել է Ծովագարդ գյուղի հին միացումներից մեկն էր: Նշված հին միացման վրա առկա էր 2,5լ/վ քանակությամբ վթար: «Գավառ» տեղամասի կողմից նշված խողովակը միացման կետից խցվակակվել է, ինչի արդյունքում ունեցանք 2,5լ/վ քանակությամբ վթարի վերացում և շահագործումից հանվել է 120մ երկարությամբ  $D=100$ մ ջրագիծ:

## Տավուշի մարզ

### Քաղաք Դիլիջան

● Շամախյան 1ա բազմաբնակարան շենքի  $D=200$ մ կոյուղագիծը անցնում էր Շամախյան 2ա և Շամախյան 3ա բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերով և խցանման դեպքում շենքերի նկուղային հարկերը լցվում էր կոյուղաջրով:

● «Դիլիջան» տեղամասի աշխատակիցների կողմից պոլիէթիլենային խողովակներով կառուցվել է  $D=200$ մ  $L=42$ գծ/մ երկարությամբ շրջանցող կոյուղագիծ: Փոխարինվել է նաև Շամախյան 1բ շենքի  $D=150$ մ կոյուղագծի  $L=12$ գծ/մ երկարությամբ հատվածը:

Իրականացված աշխատանքների արդյունքում կոյուղագիծը գործում է նորմալ:





Մարտ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1302
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	28,450
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	18,516
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	5,520
Ջրաչափական հանգույնցներ ուսուճասիրություն, սխեմաների կազմում	հատ	22
Շահագործումից հանված ջրագիծ	մ	529.5
Կառուցված ջրագիծ	մ	1373.6
Կառուցված կոյուղագիծ	մ	180.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	27
Փոխարինված փական	հատ	18
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	450
Մաքրված դիտահոր	հատ	740
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	32.5
<b>Վերացված վթարներ</b>		
	<b>Չափման միավոր</b>	<b>Քանակ</b>
Ջրամատակարարման ցանցում	հատ	961
Ջրահեռացման ցանցում	հատ	2155
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	373

Մարտ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	490	1041	417

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մարտ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	216	13	1	1	1	0	0	0	0	232
Փոխարինված	385	29	2	2	1	7	0	0	0	427
Տեղափոխված	0	1	0	0	1	1	0	0	0	3
Տեխ. ակտ	46	34	2	1	0	1	0	0	0	84
Ընդամենը	647	77	5	4	3	9	0	0	0	745

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 745 ջրաչափ: Կատարված աշխատանքների 87%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարտ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արարկիր	2360	260	16
2	Մաշտոց	1800	227	0
3	Շահումյան	1609	176	10
4	Զեյթուն	850	196	0
5	Շիրակ	1040	422	4
6	Ալավերդի	0	72	0
7	Ապարան	60	25	0
8	Արթիկ	1480	12	24
9	Աշոցք	0	3	8
10	Բերդ	0	11	0
11	Իջևան	355	14	0
12	Լոռի	2410	204	0
13	Նոյեմբերյան	350	17	6
14	Սպիտակ	90	17	0
15	Ստեփանավան	0	13	0
16	Թալին	0	19	0
17	Տաշիր	150	7	0
18	Էջմիածին	0	128	0
19	Չարենցավան	1050	69	0
20	Աբովյան	2280	67	12
21	Հրազդան	3690	90	0
22	Աշտարակ	1265	8	0
23	Կենտրոն	20	338	0
24	Հյուսիս	0	233	0
25	Հարավ	0	345	0
26	Էրեբունի	100	204	0
27	Արմավիր	0	122	1.5
28	Արտաշատ	0	86	0
29	Արարատ	190	46	0
30	Մասիս	0	57	6
31	Գավառ	200	14	0
32	Սևան	720	90	30
33	Մարտունի	0	25	0
34	Վարդենիս	0	14	0
35	Ճամբարակ	0	9	0
36	Դիլիջան	0	38	92
37	Վայք	0	11	0
38	Եղեգնաձոր	0	9	0
39	Ջերմուկ	0	22	0
40	Սիսիան	0	82	0
41	Գորիս	0	31	9
42	Կապան	0	52	0
43	Մեղրի	0	26	42
	Ընդամենը	22069	3911	260.5

## 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել է հետևյալ աշխատանքները.

- **Սևանի N3 կոյուղու պոմպակայանի** պոմպերի աշխատանքը խափանվել էր և կոյուղաջրերը չէին մղվում: Ձնման արդյունքում պարզվել է, որ պոմպի բանվորական անիվը խցանվել էր: Արդյունքում այն մաքրվեց և այժմ աշխատում է բնականոն ընթացքով:
- **Գավառ ԿՄԿ-ում** կատարվել է մանր ճաղավանդակների քերիչ սանրերի կարգաբերում: Ձննվել են նաև օդամուղները և բոլոր ռեդուկտորները:
- **Մարտունի ԿՄԿ-ում** խափանվել էր ճաղավանդակները լվացող համակարգի կափույրները, որոնք վերանորոգվել են և այժմ աշխատում են բնականոն ընթացքով:



Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	85,116	21,6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	83,167	27
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	178,607	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	165,583	21,6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	117,841	9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	15,074	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	9,468	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	24,500	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	29,700	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ 0 տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակն ըստ աշխատանքի նկարագրի
Այցերի քանակ	22
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	119
Էլեկտրական սարքերի զննում	20
Պոմպի վերանորոգում	0

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մարտ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Արևելք» ՍՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար մարտ ամսվա ընթացքում նորոգվել են թվով 8 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:



Թվով 4 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 12 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ: Թվով 48 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են: Փոխարինվել են թվով 74 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և գոտիչներ:

Թվով 4 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 2 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 4 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, մխոցներ:

Վերանորոգվել են թվով 3 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուփր լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել է թվով 2 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 4 մեքենամեխանիզմների վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

01.01.2020 թվականին ԵՏՍՍ-ում տեղամասերի թիվին ավելացել է <Թալին> առևտրային տեղամասը ընդհանուր թվով 2020 բաժանորդով, տեղափոխվել է ՄՏՍՍ-ից:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.04.2020թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 336,518, իսկ ՄՏՍՍ-ում՝ 173,794 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2019թ. մարտից - 2020թ. մարտ ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	421,163	322,773	76,6
		Իրավաբանական անձ	19,986	13,745	68,8
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	188,464	167,327	88,8
		Իրավաբանական անձ	7,405	6,467	87,3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	609,627	490,100	80,4
		Իրավաբանական անձ	27,391	20,212	73,8

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	466,559	377,558	80,9
		Իրավաբանական անձ	23,624	16,593	70,2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	254,555	188,464	74,0
		Իրավաբանական անձ	10,123	7,405	73,2
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	721,114	566,022	78,5
		Իրավաբանական անձ	33,747	23,998	71,1

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 509 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 88 նոր բաժանորդ: ԵՏՍՍ տեղամասերում հունվար ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 36,121 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 10,1 տոկոս, իսկ ՄՏՍՍ տեղամասերում աճել է 16,213 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 9 տոկոս:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և տեղափոխվում են բաժանորդների տարածքից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մարտ ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 2,297, իսկ ՄՏՍՍ-ում՝ 911 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 03.2020
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	1,962	779	133	2,874
		Իրավաբանական անձ	48	55	10	113
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	318	496	57	871
		Իրավաբանական անձ	7	32	1	40
	Ընդամենը		2,335	1,362	201	3,898

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ԵՏՍՍ-ում մարտ ամսվա ընթացքում փոխարինված 2,987 ջրաչափերի մոտ 33 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն, իսկ ՄՏՍՍ-ում փոխարինված 911 ջրաչափերի մոտ 65 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՍՍ-ի մոտավ 85,439 մ3, իսկ ՄՏՍՍ-ի՝ 23,062 մ3 վերահաշվարկված հասույթ (27.0% Երևան և 73%՝ մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



Հասույթի տվյալներում 2019թ. ցուցանիշից հանված են ՄՏՍՏ-ից ԵՏՍՏ տեղափոխված թվով 5 տեղամասերի (Աբովյան, Ապարան, Էջմիածին, Մասիս և Թալին) ցուցանիշները:

2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Մարտ ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1094,999 մլն դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 370,681 մլն ՀՀ դրամ: Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է Բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող Բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՍՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Մարտ ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 74 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 7.6 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 49 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 3.0 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը /շարունակական/		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10160	1137466524	5471	506335274	106	15859573	4570	614826027	2878	229848437

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 53,85 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1,04 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց



պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Մարտ ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործեր: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին.

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	14.897.386
2	Ազատաշեն համայնք	12.511.000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11.440.944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114.597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2. 680. 006. 883 ՀՀ դրամ:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.04.2020թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում մարտ ամսվա հատույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,199.8	1,262.9
Բնակիչ-բաժանորդներ	3,116.3	849.5
Իրավաբանական անձեր	1,083.5	413.4
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,802.8	413.8
Բնակիչ-բաժանորդներ	1,383.5	314.0
Իրավաբանական անձեր	419.3	99.8
Ընդամենը, այդ թվում	12,005.20	3,353.40
Բնակիչ-բաժանորդներ	4499.8	1163.5
Իրավաբանական անձեր	1502.8	513.2


Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 182.1 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



## 2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.04.2020 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	452,991	376,468	83.1	22,939	16,588	72.3
	Առանց ջրաչափի	13,568	1,090	8.0	685	5	0.7
Մարզեր	Ջրաչափով	231,735	170,251	73.47	9,647	6,663	69.07
	Առանց ջրաչափի	21,265	1,287	6.05	241	3	1.24
Ընդամենը	Ջրաչափով	684,726	546,719	79.8	32,586	23,251	71.4
	Առանց ջրաչափի	34,833	2,377	6.8	926	8	0.9

Տվյալների բազայում 01.04.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	592,071	296,563	50.09	25,791	7,248	28.10
Մարզեր	264,588	72,075	27.24	10,744	1,953	18.18
Ընդամենը	856,659	368,638	43.03	36,535	9,201	25.18

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2,461, իսկ մարզերում՝ 961 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 150, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 181 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

### ԵՏՍՍ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2289	1857	81.0
գ.Ղոռշյան	1537	1010	65.7
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5781	1736	30.0

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Մարտ ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 6,864, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4,465, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 733, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,258, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 759, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 768 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 753 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	109	68,347	10,139,211
Մարզեր	57	12,683	2,219,525
Ընդամենը	166	81,030	12,358,736

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի մարտ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.3%, ինչը 0.1%-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-նորում կարգաբերվել են 27 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՊ-ների վրա տեղադրված ձնշման լոգերների գրաֆիկները.


Նոր Նորքի 4-րդ գանգվածի ՃԿՊ-ի վերանորոգման ընթացքում պարզվել է, որ ջրաքանակի հետ քարերի և փայտի մնացորդները խոչընդոտում են ՃԿՊ-ի կանոնավոր աշխատանքին:

Հաշվետու ամսվա ընթացքում գոտիներում ջրաքանակների ուսումնասիրության և հոսակորուստների հայտնաբերման համար 8 հասցեներում տեղադրվել են Seba UDM-200 տիպի հոսքաչափեր:

Ստորև ներկայացված են տեղադրված հոսքաչափերի հասցեները և կորուստներ ունեցող գոտիների գրաֆիկները.




Երևան քաղաքը սնող ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2020թ-ի մարտ ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 221 լ/վ-ով, ինչի արդյունքում այդ նույն ջրաղբյուրներում ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 60 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 34902 ԿՎտ.ժ. (6,78%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

*Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ\**




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 68 հասցե, և դրանցից 19 հասցեներում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնք ճշտորոշվել են ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից: Թվով 2 հասցեում վերացվել է առաջացած վթարը, որի արդյունքում տնտեսվել է 860 ԿՎտ:

Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 8170,22 ԿՎտ.ժ կամ 27,9%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

*Էջմիածին*



**Կատարված աշխատանքներ**


Հ/Հ	Անվանում	Կատարված աշխատանքներ
1	Արարատ ՕԿՁ	Հենասուների տեղադրում և էլ մալուխի մոնտաժում
2	Գ.Գոռական	Պումպի տեղադրում
3	Չարենցավան 6, թաղ 182	Պումպի տեղադրում

Երեք հասցեներում առաջացած թերությունները վերացվել են:

**Ինվերտորների տեղադրում**

● Թվով 10 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլ. էներգիայի ծախսը նվազել է 613,4 ԿՎտ/ժամ (6%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


**Տեղադրված ինվերտորների սպառած էլ. էներգիա**



Հաշվետու ժամանակահատվածում 12 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Մարտ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 294,834 ԿՎտ.ժ կամ 45,62% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

**Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա**




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 4,501 ԳՎտ.ժ կամ 0,23 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 159,140 ԳՎտ.ժ կամ 4,22 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա*



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են հունվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	399
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	20
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	156
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	18
Ֆիզիկական բաժանորդների խմբավորում՝ ըստ լոգերի, սնուցող պոմպի ջրատարից սնվող գոտիների, մասնաճյուղերի և տեղամասերի	հատ	169948
Իրավաբանական բաժանորդների խմբավորում՝ ըստ լոգերի, սնուցող պոմպի ջրատարից սնվող գոտիների, մասնաճյուղերի և տեղամասերի	հատ	20005
Կառուցված ջրագծեր	մետր	435.8
Շահագործումից հանված ջրագծեր	մետր	520
Կառուցված կոյուղագծեր	մետր	3
ՀՀ-ում ՕԿՁ-րի տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	հատ	1
Երևանի ՕԿՁ-ի սխեմաների թարմացում ու համադրում ջրագծերի հետ ԱՏՀ-ում	հատ	12
Գեղանիստ գյուղի թվայնացում և մուտքագրում ԱՏՀ	հատ	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	11
Շենգավիթ համայնքի կոյուղագծերի թվայնացում	մետր	19052.0228
Գլաձոր գյուղի հատակագծի թվայնացում	հատ	1
Իջևան քաղաքի հատակագծի և ջրագծերի տվյալների թվայնացում ԱՏՀ-ում	հատ	1
Արաբկիր տեղամասի առանձնացում ԱՏՀ-ից և մոդելավորման համար բազայի ստեղծում	հատ	1
Սոֆիա քաղաքի օրինակով ընթացակարգերի թարմացում և հարմարեցում ԱՏՀ աշխատակիցների կանոնակարգման համար	Հատ	1
Ընթացակարգերի մշակում ակտիվների կառավարման բազայի ստեղծման համար	հատ	1



Շահագործման տեղամասերի ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և կոյուղատար ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:

Տեղամաս	Շահագործումից հանված ջրագիծ (մ)	Կառուցված ջրագիծ (մ)	Շահագործումից հանված կոյուղագիծ (մ)	Կառուցված կոյուղագիծ (մ)
Էրեբունի	500	406		
Շահումյան		3,2		3
Զեյթուն	20	32		

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերվել են մի շարք վթարներ

**Բազմադրյուր, Արարատ պ/կ**  
 Ջրատարի վրա հայտնաբերվել են վթարներ՝ գումարային  $\approx 10$ լ/վ: Դրանք վերացվել են ՇՏ-ների կողմից:  
 Ազարակ պոմպակայանի ջրագծի վրա հայտնաբերված վթարները: Դրանք ևս վերացվել են ( $\approx 5$ լ/վ):



#### Գառնի-Երևան

Գառնի-Երևան ջրատարի վրա՝ Նուբարաշենի վարչական տարածքում գտնվող գերեզմանների մոտ հայտնաբերվել է վթար՝  $\approx 2$ լ/վ: Այն վերացվել է:



#### Ապարան-Երևան

Ապարան-Երևան ջրատարի վրա՝ դեպի Նոր Երզնկա գյուղն ընկած հատվածում, հայտնաբերվել են վթարներ և վթարված միացումներ, որոնք վերացվել են: Վերականգնված ջրաքանակը կազմել է 6լ/վ:



### Արզական-Խարբերդ

Արզական-Խարբերդ ջրատարի վրա հայտնաբերվել է վթար՝  $\approx 5$ լ/վ: Այն վերացվել է:



### Արարատ ՕԿՁ

Շահագործման է հանձնվել Արարատ ՕԿՁ-ի մոտ տեղադրված պամպակայանը՝ Ջողի ուղղությամբ: Այն հնարավորություն է տվել առանց ջրատարում ճնշումները բարձրացնելու ջուր մղել Ջողի ուղղությամբ և բարձր ճնշման արդյունքում ջուր տնտեսել կորուստներից խուսափելով:

ՕԿՁ-ն նաև հնարավորություն է տվել քաղաքի ջրամատակարարումը 6-10 ժամի փոխարեն դարձնել 17-ժամյա: Ջրատարի քաղաք մուտք գործող հատվածում տեղադրվել է ՃԿՓ, ապա մի շարք վթարավերականգնողական աշխատանքներից հետո քաղաքի ջրամատակարարման որակը բարելավվել է:



### Ղազարավան


Շինարարական աշխատանքներից հետո շահագործման է հանձնվել նաև Ղազարավանի խորքային հորերի ջրատարը: Այստեղ փոխարինվել է 400մ երկարությամբ ջրագիծ, որի արդյունքում տնտեսվել է 30լ ջրաքանակ: Մա ապահովել է կայուն ջրամատակարարում դեպի Ագարակի պ/կ:



### 3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● 2020թ-ի մարտ ամսվա ընթացքում անկախ կորոնավիրուսի տարածման դեմ կիրառվող սահմանափակումների հանգամանքներից, գոտիավորման բաժինն իրականացրել է լայնածավալ աշխատանքներ, որոնք ընդգրկել են ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ Արմավիր, Իջևան, Վանաձոր, Սևան, Էջմիածին, Գյումրի, Արարատ, Զոդ քաղաքների ջրամատակարարման ցանցերը:


Գառնի ջրատարից սնվող Արարատ, Զոդ, Սուրենավան, Արմաշ և Երասխ համայնքների ջրամատակարարումը բարելավելու, ջրատարի ճնշումները 12 բարից 5 բար իջեցնելու, ջրաքանակներ խնայելու, հաճախակի կրկնվող վթարները բացառելու, շահագործման ծախսերը կրճատելու նպատակով Արարատ ՕԿՁ տարածքում կառուցվել է նոր պոմպակայան, որտեղ տեղադրվել են նոր գերծամանակակից պոմպեր՝ հնարավորություն տալով վերը նշված համայնքների ջրամատակարարումն իրականացնել 24-ժամյա գրաֆիկով:




Երասխ գյուղի ջրամատակարարման սխեմա

● Ընտրված 24-ժամյա ջրամատակարարում ունեցող որոշ գոտիներում տեղադրվել են գիշերային ծախսաչափեր՝ հասկանալու համար ջրի բաշխման բալանսը և գաղտնի վթարների առկայությունը: Ուսումնասիրվում են նաև գոտիների գլխամասերում տեղադրված և Locator համակարգին միացված էլեկտրամագնիսական ծախսաչափերի տվյալները: Այդ աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և տեղամասերի կողմից վերացվել են 78 հատ գաղտնի վթարներ՝ խնայելով 126,1լ/վ ջրաքանակ՝ արդյունքում բարելավելով բազմաթիվ թաղամասերի ջրամատակարարումը և վերացնելով բաժանորդների ջրի ճնշումների հետ կապված բողոքները: Աշխատանքներն ամբողջությամբ արտացոլվել են SMART MONITORING & STRATEGY համակարգում:


Սևանի «Շինարարներ» գոտու գիշերային ծախսաչափի տվյալներ




Երևանի «Նորքի 7-րդ գանգված» գոտու գիշերային ծախսաչափերի տվյալներ




Երևանի «15 թաղամաս» գոտու գիշերային ծախսաչափի տվյալներ




Երևանի «15 թաղամաս» N 1 ենթագոտու գիշերային ծախսաչափի տվյալներ




Իջևանի «Գետահովիտ 2» գոտու գիշերային ծախսաչափի տվյալներ



Երևանի «Արտաշիայան» գոտու գիշերային ծախսաչափերի տվյալներ



Իջևանի «Մայիտակ Ջուր» գոտու գիշերային ծախսաչափի տվյալներ



Գիշերային ծախսաչափերի տեղադրման և առավել խոշոր արդյունքներ գրանցած աշխատանքներն ամփոփ կերպով ներկայացված են աղյուսակ 7-ում:

աղյուսակ 7

Գոտու անվանում	Ենթագոտի	Տեղադրված գիշերային ծախսաչափի հասցե	Վերլուծության և արդյունք	Հայտնաբերված / վրացված վթարների քանակ	Խնայված ջրաքանակ (լ/վ)	Նշումներ
Սևան - Շինարարներ	Նալբանդյան	Նալբանդյան-Սևանացի խաչ	4/վ վթարի առկայություն	1	4	Վթարը վերացված է
Երևան -7-րդ գանգված	Ընդհանուր ջրագիծ	Դ. Բեկ փողոց	6 /վ վթարի առկայություն			Արդյունքների հիմնա վրա կատարվել են ճնշումների կարգավորման աշխատանքներ
	Դավիթ Բեկ	Հ. Ավետիսյան - Դ. Բեկ խաչ	6 /վ վթարի առկայություն	1	6	Վթարը վերացված է
	Թաղամասի I ճյուղի վրա		1-2 /վ վթարի առկայություն	1	0.9	Վթարը վերացված է
	Թաղամասի I ճյուղի վրա		1-2 /վ վթարի առկայություն	1	1.2	Վթարը վերացված է
Երևան -15 թաղամաս	Մազմանյան փողոց- 16 հարկանիներ	Մազմանյան 4 շենքի մոտ	3-4/վ վթարի առկայություն	1	3.2	Վթարը վերացված է
	Նոր թաղ.	Միլիկյան նոր խճ - Աշտարակի խճ. Խաչ	9/վ վթարի առկայություն	1	9	Վթարը վերացված է
Երևան - Արտաշիայան	Արտաշիայան - ընդհանուր	Արտաշիայան - Բագրատունյաց խաչ				Արդյունքների հիմնա վրա կատարվել են ճնշումների կարգավորման աշխատանքներ
	Արտաշիայան - Արագած ուղղություն	Արտաշիայան - Հ. Հովսեփյան խաչ	7-8/վ վթարի առկայություն	1	4.5	Աշխատանքներ են տարվում մյուս վթարները հայտնաբերելու ուղղությամբ
	Արտաշիայան - Ավե Դենտ ուղղություն	Արտաշիայան - Հովհաննիսյան խաչ	5-6/վ վթարի առկայություն	1	3.4	Աշխատանքներ են տարվում մյուս վթարները հայտնաբերելու ուղղությամբ
	Արտաշիայան - Բագրատունյաց ուղղություն	Բագրատունյաց 7 շենքի մոտ	15-20/վ վթարի առկայություն	1	7	Աշխատանքներ են տարվում մյուս վթարները հայտնաբերելու ուղղությամբ
Իջևան - Գետահովիտ 2	Բլբուլյան փողոց	կառավարման հանգույցում				Տեղադրման արդյունքում պարզ է դարձել ջրամատակարարման ուղղությունները
Իջևան - Մայիտակ ջուր	Ասլանյան	Բլբուլյան - Ասլանյան խաչ		1	0.3	

Գոտիավորման բաժինը էներգովերահսկողության խմբի հետ համատեղ աշխատանքներ է իրականացնում նաև Երևան քաղաքի այն պոմպակայաններում, որտեղ հոսանքի գիշերային ծախսերում նվազում չի նկատվում: Ուսումնասիրելով էլեկտրաէներգիայի չափիչների արդյունքները՝ էներգովերահսկողության խմբի աշխատակիցների կողմից ներկայացվում են պոմպակայանի հասցեներ: Գոտիավորման բաժնի կողմից ուսումնասիրվում են այդ պոմպակայանների ջրամատակարարման սխեմաները, որի արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ վթարներ:

Այդ հասցեներին և հայտնաբերված վթարների ջրաքանակները ներկայացնում ենք աղյուսակ 8-ում.


աղյուսակ 8

Հ/Հ	Պոմպակայանի հասցե	Հայտնաբերված վթարի ջրաքանակ
1	Դիմիտրով 78, 80	0,2
2	Լենինգրադյան 31/8	0,4
3	Պարոնյան 1	1
4	Մայիսի 9, 11	1,2
5	Բյուսով 28	2,5

Տարբեր տեղամասերում եղած խնդիրներն հասկանալու, եղած ավելցուկային ճնշումները կառավարելու և ջրաքանակներ խնայելու համար տնօրենի և տեղամասի պետի հետ իրականացվել են համատեղ քննարկումներ, որի արդյունքում տեղադրվել են նաև ճնշման լոգերներ ու գիշերային ծախսաչափեր՝ բարձրացված խնդիրներին լուծում տալու նպատակով: Տրվել են բազմաթիվ առաջարկներ որոշ ջրագծերի վրա ՃԿՓ-ներ տեղադրելու ուղղությամբ.

- «Արարատ» տեղամասի Արարատ քաղաքի մուտքագծի վրա՝ D=200մմ ՃԿՓ-ի տեղադրման արդյունքում տնտեսվել է մոտ 12լ/վ ջրաքանակ, որի արդյունքում քաղաքի ջրամատակարարման տևողությունն ավելացել է 8 ժամով:
- Չոդ ավանի մուտքագծի վրա D=150մմ ՃԿՓ-ի տեղադրման արդյունքում տնտեսվել է մոտ 8լ/վ ջրաքանակ, իսկ քաղաքի ջրամատակարարման տևողությունն ավելացել է 6 ժամով:
- «Աշտարակ» տեղամասում՝ Ոսկեհատ գյուղի մուտքագծի վրա տեղադրված D=50մմ ՃԿՓ-ի շնորհիվ գյուղի ջրամատակարարման ցանցում իջեցվել են ջրի ճնշումները, տնտեսվել է 4լ/վ ջրաքանակ, վերացել են հաճախակի կրկնվող վթարները:
- Արտաշատ տեղամասի Նորաշեն գյուղի մուտքագծի վրա տեղադրված D=100մմ ՃԿՓ-ի շնորհիվ հնարավոր է դարձել գյուղի ցանցում ճնշումները իջեցնել 20 մետրով և տնտեսել 5լ/վ ջրաքանակ:

Արարատ քաղաքի լոգերի տվյալներ



Գոտիավորման աշխատանքների արդյունքում որոշ տեղամասերում իրականացվել են նաև ջրագծերի կառուցման կամ վթարայինների շահագործումից հանման աշխատանքներ:



բ. Արարատնոր ՃԿՓ



Չոդ ավանի նոր ՃԿՓ



գ. Ոսկեհատնոր ՃԿՓ

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



## 5.1 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ


● Մշակվեցին Ընկերությունում՝ COVID-19 համավարակի կանխարգելման և շարունակական պլանները, որոնք դրվեցին գործողության մեջ:

● Ծառայության պետը մասնակցեց Ջրային կոմիտեում կոմիտեի նախագահի գլխավորությամբ տեղի ունեցած Կորոնավիրուսի դեմ իրականացվող կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ հանդիպմանը: Ըստ Կոմիտեի նախագահի պահանջի պատրաստվեց և Կոմիտեին փոխանցվեց Ընկերությունում կիրառվող գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն:

## 5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● COVID-19 համավարակի՝ Ընկերության աշխատողների շրջանում տարածման կանխարգելման միջոցառումների շրջակներում, ՈԱԱ Ծառայությունը, Գնումների ստորաբաժանման հետ համագործակցելով, աշխատակիցներին հատկացրեց մի շարք ԱՊՄ-ներ և կիրառեց նախագրուշացնող պոստերներ:

*Տրամադրված անհատական պաշտպանության միջոցներ և պոստերներ*



## 5.3 ԱՊՄ-ՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

● Հաշվետու ամսվա 24-ին Գնումների վարչությունում Մրցույթին մասնակցած կազմակերպությունների ներկայացրած ԱՊՄ-ների (Արտահագուստ, շապիկ, կոշիկ, եռակցողի արտահագուստ, կոշիկ, ձեռնոց) գնահատման համար, Ծառայությունը մշակեց գնահատման զեկույց (թերթիկները), որի համար հիմք են հանդիսացել:

▶ մրցույթին մասնակցող կազմակերպությունների կողմից առաջարկվող ԱՊՄ-ների՝ տեղում ակնադիտական զննումը (ԱՊՄ-ի վրա առկա ստանդարտների, առանձին բնութագրիչների վերաբերյալ մակնշումները, պիտակները), ներկայացված ԱՊՄ-ի որակը,

▶ մասնակից կազմակերպությունների կողմից ներկայացված ԱՊՄ-ների կամ առանձին դետալների (օրինակ՝ կտորի) վերաբերյալ հավաստման սերտիֆիկատները, սերտիֆիկատներում նշված տեխնիկական տվյալները, ստանդարտների համապատասխանությունը կոնկրետ ԱՊՄ-ի տիպի, միաժամանակ ստուգվել են հավաստագրերի գործողության ժամկետները, հավաստագրերում ներկայացվող ԱՊՄ արտադրողների տվյալները:

Գնահատման արդյունքում ուսումնասիրվել են առնվազն երկու տասնյակի հասնող ստանդարտների (ГОСТ, EN, ISO, NF, DIM, ЗУС), Տեխնիկական կանոնակարգերի (Технические регламенты Таможенного союза-ТР ТС) և Տեխնիկական Պայմանների (Технические условия-ТУ) պահանջները:

## 5.4 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅ

● Մարտի 9-12-ը աշխատանքային այցով Երևան էին ժամանել Վեոլիա Գրուպի Առողջության ու անվտանգության աուդիտի և առաջընթացի հարցերով տնօրեն Նունո Պերիկոն, Առողջության և անվտանգության կանխարգելման ծրագրերի ղեկավար Կատերինա Ռամբուրը և Վեոլիա Գրուպի Կենտրոնական և Արևելյան

Եվրոպայի Գոտու առողջության և անվտանգության մենեջեր Դալիբոր Փիշը: Այցի շրջանակներում նրանք հանդիպում ունեցան Վեոլիա Ջուր ՓԲԸ ղեկավար կազմի հետ գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի ղեկավարությամբ, քննարկվեցին օրակարգին վերաբերող բոլոր խնդիրները և հստակեցրին առաջիկա անելիքները: Հանդիպման ընթացքում Ծառայության պետը հանդիպման մասնակիցներին ներկայացրեց Ընկերության 2019-2020 թվականի առողջության և անվտանգության կառավարման վերաբերյալ զեկույց:



● Պատվիրակությունը Ծառայության աշխատակիցների հետ անվտանգության ստուգայցներ կատարեց Ալափարսի պոմպակայանում և քլորակայանում, Դիլիջանի «Գոլովինո» ջրի մաքրման կայանում և Ջերմուկի կոյուղու մաքրման կայանում: Ստուգայցի նպատակն էր համակարգում առաջնահերթությունն հանդիսացող աշխատողների առողջության և անվտանգության գործընթացների կառավարման հետագա զարգացումը, Վեոլիա Գրուպի բարձր ռիսկերի կառավարման ստանդարտների կիրառումը և աշխատողների շրջանում աշխատանքի անվտանգության մշակույթի զարգացումը:




### 5.5 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳԱՅՅԵՐ, ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին Անվտանգության ստուգայցեր Ընկերության ՀՏԿ-ներում (3 քլորակայան, 1 պոմպակայան, 1 ՋՄԿ, 1 ԿՄԿ, 1 ՕԿՁ) և կառուցվածքային ստորաբաժանումների գրասենյակներում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել համապատասխանաբար մասնագիտական և էրգոնոմիկայի հետ կապված ռիսկերի գնահատում և մեղմանցող/կանխարգելող միջոցառումների կիրառում: Այս շրջանակներում ուսումնասիրվել են նաև ՀՏԿ-ները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը և տրվել մասնագիտական ցուցումներ:





2020 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## 6.1. Համակարգչային ցանց

Մարտ ամսվա ընթացքում համակարգչային մասնագետների կողմից իրականացված աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև.

- COP2020 ինդուստրիալ ցանցերի համակարգերի աուդիտ ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում «Locator» ընկերության հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք տեխնիկական հարցեր, ինչպես նաև աուդիտի համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման ձևաչափերը և հաջորդականությունը:

- «Վեոլիա» խմբում հայտարարված կիբեռ անվտանգության հետ կապված՝ ճգնաժամի շրջանակներում իրականացվել են հետևյալ քայլերը՝

- ▶ Կապ է հաստատվել «Վեոլիա» խմբի SS անվտանգության բաժնի մասնագետների հետ:
- ▶ Ուսուճաստիքվել են կիբեռ անվտանգության հետ կապված՝ ճգնաժամի վերաբերյալ բոլոր հասանելի տեղեկատվությունը և առկա փաստաթղթերը:

- ▶ Իրականացվել է բոլոր համակարգերի ստուգում:
- ▶ Թարմացվել է Kaspersky հակավիրուսային համակարգի տարբերակը բոլոր համակարգիչների վրա՝ տեղադրվել է ամենաթարմ տարբերակը:

- ▶ Անջատվել և հեռացվել է բոլոր համակարգիչներից Netscaler ծրագրային ապահովումը:
- ▶ Բոլոր SS սպասարկման մասնագետներն իրազեկվել են կիբեռ անվտանգության հետ կապված ճգնաժամի վերաբերյալ և ստացել են համապատասխան կարգադրություններ՝ արտասովոր սպասարկման հայտերի դեպքում համապատասխան գործողությունների վերաբերյալ:

- ▶ Պատրաստվել գործողությունների հաջորդականության՝ քայլերի նկարագրություն ցանցի սեզմենտների բլոկավորման համար, համապատասխան կիբեռ հարձակումների գրանցման դեպքում:

- ▶ Ստուգվել են բոլոր բարձր արտոնություն ունեցող օգտատերերի գործունեությունները և դրանց փոփոխման ժամանակաշրջանն ու նպատակները:

- ▶ Վերանայվել են հակավիրուսային ծրագրային ապահովման կարգավորումները:

- Մեկ տարով երկարաձգվել են vjur.am դոմենը և DNS ծառայությունները:

- Իրականացվել են համապատասխան ցանցային սերվերային կարգավորումներ՝ Բաժանորդների Սպասարկման Գրասենյակներում տեղադրված նոր տեսախցիկների աշխատանքը և հասանելիությունն ապահովելու համար:

- Վերակազմակերպվել են Մարդկային Ռեսուրսներ բաժնի ընդհանուր օգտագործման ցանցային պանակների կառուցվածքն ու մուտքային արտոնությունները: Ստեղծվել են նոր ցանցային պանակներ:

- Ֆինանսական տնօրինությանը տրամադրվել են Հայկական Ծրագրերի տվյալների բազայի արխիվը՝ օֆլայն պահուստավորելու նպատակով:

- Հաշվի առնելով Հանրապետությունում ստեղծված իրավիճակը՝ արտակարգ իրավիճակում ակտիվ աջակցություն է ցուցաբերվել բոլոր աշխատակիցներին՝ հեռահար աշխատանք իրականացնելու նպատակով:

- ▶ Տրամադրվել են էլ.նամակագրության համակարգի օգտատերերի մուտքային տվյալներ և ապահովվել է էլ. նամակագրության հասանելիությունը ինտերնետից:

- ▶ Վերանայվել են VPN օգտատերերի ցանկը:
- ▶ Ստեղծվել է մոտավորապես 50 նոր VPN օգտատերեր: Տվյալ VPN տեղադրվել են աշխատակիցների անձնական համակարգիչների վրա:

- ▶ Կատարվել են համապատասխան կարգավորումներ, թարմացումներ:

- Ստեղծվել է նոր հեռահար աշխատանքի սերվեր (RDS Server) VPN-ով հեռահար աշխատող օգտատերերի համար՝ առանձնահատուկ ծրագրային աշխատանք ապահովելու համար (Հայկական Ծրագրեր, E-Invoicing և այլն):

- Հեռահար աշխատանքի համար օգտատերերին տրամադրվել են համապատասխան ֆայլեր՝ աշխատանքային համակարգիչներից:

- Կազմակերպվել է SS սպասարկման հեռահար աշխատանքի գործընթացի ապահովումը, և SS սպասարկման հեռախոսահամարների վերահասցեավորումը մասնագետների կողմից՝ հեռահառ զանգերի մշակման նպատակով:

## 6.2. Ինտերակտիվ համակարգ

Մարտ ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Մի շարք թարմացումներ և փոփոխություններ են իրականացվել ՀՕԿՀ-ի 378Ն որոշման փոփոխությունների հետ կապված՝ մասնավորապես ծանուցումների և ժամկետների հսկման կառավարման ուղղությամբ:

● Մշակվում է նոր հարթակ տեխնոլոգիաների գործընթացն ամբողջությամբ ապահովելու և բաժանորդի սպասարկման որակը բարելավելու ուղղությամբ: Նոր հարթակը թույլ կտա կառավարել բաժանորդի դիմումից սկսած մինչև բաժանորդ դառնալու գործառնությունները, ինչպես նաև բաժանորդը կկարողանա առցանց եղանակով դիմումներ և պահանջվող փաստաթղթեր ներկայացնել, տեղեկանալ գործի ընթացքի մասին:

● Ակտեր:

Ինտերակտիվ համակարգի միջոցով ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է մարտ ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառնություններ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառնությունները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է մարտ ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Ինտերակտիվ համակարգի			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ խ/մ	մլն դրան
Հրտիս	6	2.49	0.45
Էրեբունի	12	5.26	0.90
Շենգավիթ	7	3.87	0.66
Կենտրոն	1	0.26	0.05
Արաբկիր	5	2.24	0.40
Մաշտոց	6	18.71	2.89
Շահումյան	7	2.70	0.44
Քանաքեռ-Զեյթուն	5	5.11	0.88
ԶԿԲ	82	148.86	26.27
Շիրակ	9	2.28	0.41
Արթին	10	3.20	0.52
Արարատ	11	1.07	0.19
Արմավյան	4	0.81	0.14
Հրազդան	12	4.06	0.71
Արտաշատ	4	0.34	0.06
Գավառ	23	4.88	0.84
Գորիս	1	0.09	0.01
Էդեգնաձոր	1	0.52	0.08
Էջմիածին	8	6.24	1.00
Իջևան	4	0.45	0.08
Կապան	9	3.09	0.52
Մասիս	7	3.26	0.50
Արմավիր	5	2.94	0.52
Աշտարակ	8	2.04	0.33
Չարենցավան	4	0.78	0.14
Մայիտակ	3	0.39	0.07
Մտեփանավան	3	0.48	0.09
<b>Ընդամենը</b>	<b>257</b>	<b>226.42</b>	<b>39.15</b>

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անաքքություն	
	քանակ	հազ խ/մ	քանակ	հազ խ/մ
Հրտիս	18	4.15	56	0.66
Էրեբունի	11	4.75	74	0.60
Շենգավիթ	22	10.20	106	4.61
Կենտրոն	8	16.32	33	0.58
Արաբկիր	15	5.42	80	0.63
Մաշտոց	20	10.68	76	1.45
Շահումյան	7	2.64	58	0.40
Քանաքեռ-Զեյթուն	12	8.00	67	6.66
ԽՈՇՈՐ	0	-	1	0.07
Լոռի	5	1.44	20	0.11
Շիրակ	17	3.84	76	0.45
Արթին	2	1.03	15	0.11
Արարատ	7	0.67	50	3.27
Արմավյան	3	0.46	9	0.05
Հրազդան	4	0.81	6	0.03
Այվերդի	3	1.29	42	0.46
Աշոցք	1	0.52	2	0.02
Արտաշատ	0	-	19	0.28
Բերդ	1	0.12	11	0.07
Գավառ	3	0.52	64	0.36
Գորիս	1	0.52	12	0.12
Դիլիջան	1	0.52	19	0.13
Էդեգնաձոր	0	-	18	0.12
Էջմիածին	4	1.78	20	0.10
Իջևան	2	0.39	16	0.22
Կապան	6	1.80	21	0.13
Ճամբարակ	0	-	3	0.02
Մասիս	4	1.74	27	0.22
Մարտունի	0	-	24	0.13
Մեղրի	0	-	10	0.20
Նոյեմբերյան	3	1.29	9	0.06
Արմավիր	3	1.29	50	0.46
Զեյթուն	0	-	1	0.00
Սևան	1	2.59	8	0.06
Վայք	0	-	6	0.03
Չարենցավան	2	0.52	52	0.17
Միսիան	0	-	8	0.05
Մայիտակ	1	0.13	25	0.09
Մտեփանավան	0	-	19	0.12
Տաշիր	0	-	24	0.14
<b>Ընդամենը</b>	<b>187</b>	<b>85.41</b>	<b>1237</b>	<b>23.44</b>



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադունցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am